ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2019 – 2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՌՅԱՆՑ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

§ 1. Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների ընդհանուր նկարագիրը 4

1.1. Հարցմանը մասնակցած շրջանավարտների խմբի կառուցվածքային նկարագիրը 4

1.2. Հարցմանը մասնակցած շրջանավարտների գնահատականների ընդհանուր նկարագիրը 21

§2. Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ում ստացած կրթական ծրագրերից 23

2.1. Շրջանավարտների գնահատականների ընդհանուր նկարագիրը 23

2.2. Շրջանավարտների բավարարվածությունը մասնագիտական կարողություններից 26

2.3. Շրջանավարտների բավարարվածությունը տեսական գիտելիքներից 28

2.4. Շրջանավարտների բավարարվածությունը գործնական հմտություններից 30

2.5. Շրջանավարտների բավարարվածությունը օտար լեզուների իմացությունից 33

2.6. Շրջանավարտների բավարարվածությունը հաճախած դասընթացների օգտակարությունից 35

2.7. Շրջանավարտների բավարարվածությունը պրակտիկաների օգտակարությունից 38

2.8. Շրջանավարտների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից 40

2.9. Շրջանավարտների բավարարվածությունը ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից 42

2.10. Շրջանավարտների բավարարվածությունը ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից 44

2.11. Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը շրջանավարտների կողմից 46

§3. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից 49

3.1. Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից 52

3.2. Բավարարվածությունը համակարգչային սրահներից 54

3.3. Բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից 56

3.4. Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից 58

3.5. Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից 60

3.6. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ գրադարանից 62

3.6.1. Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց.....62
3.6.2. Բավարարվածությունը գրադարանի կահավորանքից.....64
3.6.3. Բավարարվածությունը գրադարանում սպասարկումից.....66
§4. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ի միջավայրից.....68
4.1. Գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից 70
4.2. Գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից 72
4.3. Գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից 74
4.4. Գոհունակությունը ուսանողական կառույցներից 76
4.5. Գոհունակությունն ուսանողներին արձագանքելու ընթացակարգից 78
4.6. Կոռուպցիայի հնարավոր դրսևորումները 80
§5. ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը.....83
Ամփոփում 88

§ 1. Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների ընդհանուր նկարագիրը

1.1. Հարցմանը մասնակցած շրջանավարտների խմբի կառուցվածքային նկարագիրը

Տվյալ Հաշվետվության մեջ ներկայացված է 2019-2020 թ.թ. շրջանավարտների գնահատականների հետազոտության արդյունքների վերլուծություն՝ որոշ համեմատություններ իրականացնելով 2018-2019 ուս. տարվա հետ: Պետք է նշել, որ ինչպես և 2018-2019 թ.թ., այնպես էլ 2019-2020թ.թ. ընտրանքային համախմբությունը թույլ չի տալիս խոսել ընտրանքի ներկայացուցչության մասին:

Հարցմանը մասնակցել են ընդամենը **851** շրջանավարտ, ինչը կազմում է բոլոր 2019-2020թ.թ. շրջանավարտների **20%-ից պակաս**: Պետք է նշել, որ նման իրավիճակ տեղի է ունեցել նաև 2018-2019թ.թ. ուսանողների համար, երբ հարցմանը մասնակցել էր շրջանավարտների ընդամենը 35 %-ը: Ըստ այդմ տվյալ հետազոտության տվյալների ներկայացուցչությունն ապահովված չէ, և այն կարելի է բնութագրել ընդամենը **ցանկություն ցուցաբերած կամավոր** շրջանավարտների հարցում /ստորև կնկարագրվի նաև այդ ***կամավորների*** համախմբությունը/:

Այստեղից կարող ենք հետևանք անել, որ

> ➔ Շրջանավարտների առցանց հարցումների տեխնոլոգիան անհրաժեշտ է *վերանայել*, շեշտը դնելով ***մոտիվացիայի բարձրացման վրա***: Մասնավորապես, որպես խրախուսման միջոց կարելի է ներառել որոշակի արտոնություններ պատասխանած ուսանողների համար, որպեսզի ԲՈԼՈՐ շրջանավարտները շահագրգռված լինեն մասնակցել հարցմանը: Ընդ որում նման խրախուսման ձևերը պետք է կրեն ունիվերսալ բնույթ, այսինքն՝ հետաքրքիր լինեն բոլոր շրջանավարտների համար:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ***կամավորների*** բաշխումն ըստ ֆակուլտետների շեղված է (Տե՛ս Աղյուսակ 1) և որոշ ֆակուլտետներից մասնակիցների տեսակարար

կշիռը ամբողջի մեջ շեղվում է գլխավոր համախմբությունից ավելի քան 9,5%-ով, օրինակ՝ ***Եվրոպական լեզուների*** ֆակուլտետի շրջանավարտների համար (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 1

2020թ. շրջանավարտների բաշխումն ըստ ֆակուլտետների

	Ֆակուլտետ	Վիճակագրական տվյալներ		Բազա		Ընտրանք	
		Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը
1	Մաթեմատիկայի և Մեխանիկայի ֆակուլտետ	154	3.6	153	3.5	38	4.5
2	Ինֆորմատիկայի և Կիրառական Մաթեմատիկայի ֆակուլտետ	242	5.7	247	5.7	29	3.4
3	Ֆիզիկայի ֆակուլտետ	79	1.8	80	1.8	20	2.4
4	Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ	123	2.9	125	2.9	31	3.6
5	Քիմիայի ֆակուլտետ	30	0.7	30	.7	9	1.1
6	Կենսաբանության ֆակուլտետ	134	3.1	134	3.1	27	3.2
7	Աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետ	330	7.7	330	7.6	34	4.0
8	Պատմության ֆակուլտետ	364	8.5	250	5.8	19	2.2
9	Միջազգային Հարաբերությունների ֆակուլտետ	463	10.8	467	10.8	142	16.7
10	Տնտեսագիտության և Կառավարման ֆակուլտետ	349	8.2	478	11.0	52	6.1
11	Փիլիսոփայության և Հոգեբանության ֆակուլտետ	194	4.5	204	4.7	27	3.2
12	Սոցիոլոգիայի ֆակուլտետ	155	3.6	158	3.6	3	.4
13	Հայ Բանասիրության ֆակուլտետ	194	4.5	195	4.5	90	10.6
14	Ժուռնալիստիկայի ֆակուլտետ	122	2.9	126	2.9	13	1.5
15	Ռուս Բանասիրության ֆակուլտետ	45	1.1	44	1.0	14	1.6
16	Եվրոպական Լեզուների և Հաղորդակցության ֆակուլտետ	495	11.6	495	11.4	109	12.8
17	Արևելագիտության ֆակուլտետ	167	3.9	167	3.9	38	4.5
18	Իրավագիտության ֆակուլտետ	301	7.0	305	7.0	71	8.3
19	Աստվածաբանության ֆակուլտետ	60	1.4	62	1.4	1	.1
20	ՏՏ Կրթական և Հետազոտական Կենտրոն	15	0.4	15	.3	8	.9
21	Եվրոպական Ուսումնասիրությունների Կենտրոն	32	0.7	35	.8	1	.1
22	Մանկավարժության և Կրթության Զարգացման Կենտրոն	41	1.0	43	1.0	40	4.7
23	Ֆարմացիայի Ինստիտուտ	185	4.3	186	4.3	35	4.1
24	Հայագիտական Հետազոտությունների Ինստիտուտ	2	0.0	2	.0	0	0
	Ընդամենը	4276	100.0	4331	100.0%	851	100.0

Եթե դասակարգենք ֆակուլտետներն ըստ շրջանավարտների հարցմանը մասնակցության, ապա 2019 թ. *ընդհանուր ցածր մասնակցության* ֆոնի վրա առանձնանում են ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնը*** և ***ՏՏԿՀ Կենտրոնը,*** որտեղ մասնակցությունը կեսից ավելին էր, ինչպես նաև ***Հայ*** և ***Ռուս Բանասիրությունների*** ֆակուլտետները և ***Քիմիայի*** ֆակուլտետը, որտեղ մասնակցությունը գերազանցում է 30%-ը։

Աղյուսակ 2.

Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների տոկոսն ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների տոկոս 2020 թ.
Մանկավարժության և Կրթության Զարգացման Կենտրոն	93.0%
ՏՏ Կրթական և Հետազոտական Կենտրոն	53.3%
Հայ Բանասիրության ֆակուլտետ	46.2%
Ռուս Բանասիրության ֆակուլտետ	31.8%
Միջազգային Հարաբերությունների ֆակուլտետ	30.4%
Քիմիայի ֆակուլտետ	30.0%
Ֆիզիկայի ֆակուլտետ	25.0%
Մաթեմատիկայի և Մեխանիկայի ֆակուլտետ	24.8%
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ	24.8%
Իրավագիտության ֆակուլտետ	23.3%
Արևելագիտության ֆակուլտետ	22.8%
Եվրոպական Լեզուների և Հաղորդակցության ֆակուլտետ	22.0%
Կենսաբանության ֆակուլտետ	20.1%
Ֆարմացիայի Ինստիտուտ	18.8%
Փիլիսոփայության և Հոգեբանության ֆակուլտետ	13.2%
Ինֆորմատիկայի և Կիրառական Մաթեմատիկայի ֆակուլտետ	11.7%
Տնտեսագիտության և Կառավարման ֆակուլտետ	10.9%
Աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետ	10.3%
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ	10.3%
Պատմության ֆակուլտետ	7.6%
Եվրոպական Ուսումնասիրությունների Կենտրոն	2.9%
Սոցիոլոգիայի ֆակուլտետ	1.9%
Աստվածաբանության ֆակուլտետ	1.6%
Հայագիտական Հետազոտությունների Ինստիտուտ	0.0%
Ընդամենը	**19.6%**

Հակառակ բևեռում են ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը***, ***Աստվածաբանության*** և ***Սոցիալագիայի*** ֆակուլտետները, որտեղ մասնակցությունը մինչև 3% է /տե՛ս Աղյուսակ 2/: Նշենք, որ վերը նշված ֆակուլտետների, ինչպես նաև ***Եվրոպական լեզուների և հաղորդակցության*** և ***Պատմության*** ֆակուլտետների շրջանավարտները ցածր մասնակցություն են դրսևորել նաև 2019թ.-ին:

Վերլուծելով ընտրանքի կառուցվածքի շեղումներն ըստ ֆակուլտետների կարող ենք փաստել, որ մոտ 5%-ով <u>պակաս</u> են ***Տնտեսագիտության և կառավարման*** ֆակուլտետի շրջանավարտները, մոտ 4%-ով՝ ***Աշխարհագրության և երկրաբանության***, ինչպես նաև ***Պատմության*** ֆակուլտետների շրջանավարտները, 3,2%-ով՝ ***Սոցիոլոգիայի*** և 2,3%-ով՝ ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները: Դրա հետ մեկտեղ ավելի, քան 6%-ով <u>գերազանցում</u> են ***Հայ Բանասիրության,*** ինչպես նաև ***Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետների շրջանավարտները, մոտ 4%-ով <u>ավել</u> են ***Մանկավարժության և Կրթության Զարգացման Կենտրոնի*** շրջանավարտները /տե՛ս Աղյուսակ 3/:

Այսպիսով, ընդհանուր առմամբ գնահատականները շեղված են ի օգուտ ***Հայ Բանասիրության, Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետների, ինչպես նաև ***Մանկավարժության և Կրթության Զարգացման Կենտրոնի*** շրջանավարտների, որոնք նախորդ հետազոտություններում դրսևորել են կրթական գործընթացի տարբեր կողմերից բավականին *բարձր* գոհունակության աստիճան: Մյուս կողմից, գնահատականները շեղված են ի վնաս ***Տնտեսագիտության և կառավարման, Աշխարհագրության և երկրաբանության***, ***Պատմության, Սոցիոլոգիայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտների գնահատականները: Պետք է նշել, որ նախորդ հետազոտությունների արդյունքում ***Տնտեսագիտության և կառավարման, Սոցիոլոգիայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները առանձնանում էին կրթական գործընթացի տարբեր կողմերից համեմատաբար ավելի *ցածր* գոհունակությամբ, իսկ ***Աշխարհագրության և երկրաբանության***, ***Պատմության*** ֆակուլտետների շրջանավարտները տարբեր տարիներին *տարբեր* գոհունակության աստիճան էին դրսևորում:

Աղյուսակ 3.

Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների տոկոսային շեղումները գլխավոր և ընտրանքային համախմբությունների միջև ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	Գլխավոր համախմբության և ընտրանքային համախմբության միջև տոկոսային տարբերությունը
Տնտեսագիտության և Կառավարման ֆակուլտետ	4.9%
Աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետ	3.6%
Պատմության ֆակուլտետ	3.6%
Սոցիոլոգիայի ֆակուլտետ	3.2%
Ինֆորմատիկայի և Կիրառական Մաթեմատիկայի ֆակուլտետ	2.3%
Փիլիսոփայության և Հոգեբանության ֆակուլտետ	1.5%
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ	1.4%
Աստվածաբանության ֆակուլտետ	1.3%
Եվրոպական Ուսումնասիրությունների Կենտրոն	0.7%
Ֆարմացիայի Ինստիտուտ	0.2%
Կենսաբանության ֆակուլտետ	-0.1%
Քիմիայի ֆակուլտետ	-0.4%
Ֆիզիկայի ֆակուլտետ	-0.6%
Ռուս Բանասիրության ֆակուլտետ	-0.6%
Արևելագիտության ֆակուլտետ	-0.6%
ՏՏ Կրթական և Հետազոտական Կենտրոն	-0.6%
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ	-0.7%
Մաթեմատիկայի և Մեխանիկայի ֆակուլտետ	-1%
Իրավագիտության ֆակուլտետ	-1.3%
Եվրոպական Լեզուների և Հաղորդակցության ֆակուլտետ	-1.4%
Մանկավարժության և Կրթության Զարգացման Կենտրոն	-3.7%
Միջազգային Հարաբերությունների ֆակուլտետ	-5.9%
Հայ Բանասիրության ֆակուլտետ	-6.1%

Գլխավոր համախմբության կառուցվածքն ըստ **սեռի** բացակայում է, ըստ այդմ հնարավոր չէ դատել ընտրանքի ներկայացուցչության մասին ըստ սեռի: Համեմատելով

2020 և 2019 թ.թ. շրջանավարտների կառուցվածքն ըստ սեռի, կարող ենք եզրակացնել, որ երկու դեպքում էլ գերակշռում են ***իգական*** սեռի ներկայացուցիչները /տե՛ս Գծապատկեր 1/, մոտավորապես նույն տոկոսային համադրությամբ: Ի դեպ, բոլոր տարիների հետազոտություններից կարելի է եզրակացնել, որ **կամավորների կազմում գերակշռում են կանայք** :

Գծապատկեր 1.

2020թ. հարցված շրջանավարտների բաշխումն ըստ սեռի



Նշենք նաև, որ հարցված շրջանավարտների բաշխումն ըստ **կրթական աստիճանի** ևս որոշակի շեղում է ունեցել ԵՊՀ շրջանավարտների ընդհանուր կառուցվածքին ըստ կրթական աստիճանի (տե՛ս Աղյուսակ 4), տարբերվելով 7,7 %-ով *ի օգուտ մագիստրոսների*:

Աղյուսակ 4.

Շրջանավարտների բաշխումն ըստ կրթական աստիճանի

՝	Հարցվածների տոկոսը	Բոլոր շրջանավարտների տոկոսը
Բակալավրիատ	**64.9%**	**72.6%**
Մագիստրատուրա	**35.1%**	**27.4%**
Ընդամենը	100.0%	100,0%

Ըստ **ուսման համակարգի** ընտրանքային տվյալները **7.8%** -ով տարբերվում է ԵՊՀ շրջանավարտների ընդհանուր կառուցվածքից *ի օգուտ առկա կրթական համակարգի* շրջանավարտների /տե՛ս Աղյուսակ 5/։

Աղյուսակ 5.

Շրջանավարտների բաշխումն ըստ ուսման համակարգի

	Հարցվածների տոկոսը	Բոլոր շրջանավարտների տոկոսը
Առկա	**89.7%**	**81.9%**
Հեռակա	**10.3%**	**18.1%**
Ընդամենը	100.0%	100,0%

Ըստ **ամփոփիչ միջին գնահատականի** շրջանավարտները բաշխվել են հետևյալ կերպ /Տես Գծապատկեր 2/։

Գծապատկեր 2.

Շրջանավարտների բաշխումն ըստ ամփոփիչ միջին գնահատականի



Չնայած, որ տվյալներ չկան ամբողջ համախմբության առաջադիմության վերաբերյալ, սակայն պատասխնողներին կարող ենք բնութագրել, որպես բավականին ***բարձր առաջադիմություն*** ունեցողներին, ում կազմում կեսից ավելին ունեն ***գերազանց*** առաջադիմություն:

Ընդ որում կարող ենք անել եզրակացություն, որ հետազոտությանը մասնակցել է ավելի ***բարձր առաջադիմություն ունեցող*** շրջանավարտների համախմբություն:

Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների **ուսումը շարունակելու** ցանկությունը կազմել է մոտ 57.9%, ինչը ի դեպ գրեթե չի տարբերվում անցյալ տարվա տվյալից:

Այդ տոկոսը գոյանում է հիմնականում *բակալավրիատի* շրջանավարտների պատասխաններից. բակալավրիատն ավարտածների գերակշռող մեծամասնությունը (69.9%) ձգտում է շարունակել ուսումը: Մագիստրատուրան ավարտածների համար այդ թիվը կազմում է 40.8 % (տե՛ս Գծապատկեր 3): Նման իրավիճակ գրանցվել է գրեթե բոլոր տարիներին անցկացված հետազոտությունների արդյունքներում:

Գծապատկեր 3.

Շրջանավարտների ուսումը շարունակելու ցանկությունն ըստ կրթական աստիճանի



Տարբեր ֆակուլտետներում ըստ կրթական աստիճանի ուսումը շարունակել ցանկացող շրջանավարտների տոկոսները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս Գծապատկեր 4):

Վերլուծելով տվյալները կարող ենք փաստել, որ ***Աստվածաբանության, Իրավագիտության, Ֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտներն առանձնանում են ուսումը շարունակելու համեմատաբար բարձր ցանկությամբ ինչպես 2019թ., այնպես էլ 2020թ.-ին: Նրանց ցանկին 2020թ. ավելացել են նաև ***Կենսաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները: Իսկ ***Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետի հարցվողները 2020թ.-ին դրսևորել են ցանկության ավելի ցածր տոկոս՝ ի համեմատ 2019թ.-ի: Այստեղ պետք նշել , որ քանի որ հարցմանը մասնակցած շրջանավարտների կառուցվածքում գերակշռում են մագիստրոսները, ըստ այդմ շեղումներն ըստ տարբեր ֆակուլտետների կարող են փոփոխական լինեն, կապված մագիստրոսների քանակի հետ: Դրանով է պայմանավորված նաև պատասխանների անհամասեռությունն ըստ ֆակուլտետների:

Գծապատկեր 4.

Շրջանավարտների ուսումը շարունակելու ցանկությունն ըստ ֆակուլտետների



Հետազոտության անցկացման պահի դրությամբ հարցին պատասխանած շրջանավարտների 51.9% աշխատում էր, ընդ որում աշխատողների կեսից ավելին՝ իրենց իսկ մասնագիտությամբ (տե՛ս Գծապատկեր 5): Համեմատության համար 2019թ.

աշխատում էր պատասխանածների 49,8 %-ը: Նշենք, որ ի տարբերություն 2019թ. տվյալների, տվյալ շրջանավարտների զանգվածը առանձնանում է և՛ աշխատաշուկայում ներգրավվածների որոշ գերակշռությամբ, և՛ մասնագիտությամբ աշխատողների մի փոքր ավելի բարձր տոկոսով, չնայած որ ընդհանուր առմամբ համեմատություններ անել այդքան էլ կոռեկտ չէ:

Գծապատկեր 5.

Շրջանավարտների բաշխումն ըստ աշխատանքի առկայության



Նշենք, որ տվյալ հետազոտության համար ևս պահպանվում է այն միտումը, որ մագիստրատուրան ավարտած շրջանավարտներն ի տարբերություն բակալավրիատն ավարտածների՝ ավելի են ընդգրկված աշխատաշուկայում (տե՛ս Գծապատկեր 6): 2020թ.-ին՝ ի համեմատ 2019թ.-ի մագիստրոս հարցվողների ավելի մեծ տոկոսն է աշխատում մասնագիտությամբ, չնայած որ ընդհանուր աշխատողների տոկոսը գրեթե չի փոխվել:

Գծապատկեր 6.

Աշխատանքի առկայությունն ըստ կրթական աստիճանի



Պետք է նշել, որ ֆակուլտետներն ըստ շրջանավարտների աշխատաշուկայում ընդգրկվածության՝ ևս նշանակալի տարբերվում են (տե՛ս Գծապատկեր 7)։

Նշենք, որ ***ՏՏ կենտրոնի*** շրջանավարտների մասնագիտացվածության աստիճանը, ինչպես և գրեթե բոլոր տարիներին ավանդաբար զբաղեցնում է բարձր տեղ։ Նույնը վերաբերում է ***Ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների*** ֆակուլտետի շրջանավարտներին։ ***Ֆիզիկայի*** և ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետների հարցվողները ևս զբաղեցնում են բարձր տեղ աշխատաշուկայում ներգրավվածության տեսանկյունից։ ***ԵՈՒ կենտրոնի***ց հարցվողները ավանդաբար ունեն բարձր ներգրավվածություն աշխատաշուկայում, սակայն մասնագիտացվածության աստիճանը նրանց մոտ բավականին ցածր է։ 2020թ. այն հավասարվել է 0-ի /տե՛ս Գծապատկեր 7-ում/։

Գծապատկեր 7.

Շրջանավարտների մոտ աշխատանքի առկայությունն ըստ ֆակուլտետների

Պետք է նշել նաև, որ **հեռակա** ուսուցման համակարգում սովորող շրջանավարտները ավելի են ներգրավված աշխատաշուկայում, նաև նրանց մասնագիտացման աստիճանը ևս որոշ չափով ավելի բարձր է, քան **առկա** ուսուցման համակարգում սովորող շրջանավարտների ներգրավվածությունը և մասնագիտացվածությունը /տե՛ս Գծապատկեր 8/:

Գծապատկեր 8.

Շրջանավարտների մոտ աշխատանքի առկայությունն ըստ ուսուցման ձևի:



Ի դեպ, պահպանվում է այն օրինաչափությունը, որ շրջանավարտների մեծամասնությունը (մոտ 52 % -ը) տեղյակ չէ իրենց ապագա աշխատանքի մասին: Բակալավրիատի շրջանավարտներն ավելի քիչ են տեղեկացված աշխատաշուկայում իրենց հնարավորությունների մասին, քան մագիստրատուրայի շրջանավարտները: Այդ տարբերությունը երևում է Գծապատկեր 9-ում: Ընդ որում, հաշվի առնելով այս հետազոտության ընտրանքային առանձնահատկությունները, պետք է նշենք, որ ավելի բարձր առաջադիմություն դրսևորած և հարցմանը մասնակցած շրջանավարտների մոտ ավելի բարձր է տեղեկացվածության մակարդակը նրանց աշխատաշուկայում ապագա ներգրավվածության մասին:

Գծապատկեր 9.

Ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածությունն ըստ կրթական աստիճանի



Նաև արդյունքները վկայում են այն մասին, որ հեռակա ուսուցման համակարգում սովորող շրջանավարտները որոշ չափով ավելի շատ են տեղեկացված իրենց ապագա աշխատանքի վերաբերյալ, քան առկա համակարգում սովորող շրջանավարտները /տե՛ս Գծապատկեր 9/:

Գծապատկեր 9.

Ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածների տոկոսն ըստ ուսուցման ձևի



Շրջանավարտների տեղեկացվածության մակարդակն ըստ ֆակուլտետների կարելի է տեսնել Գծապատկեր 10-ում:

Գծապատկերի տվյալները վկայում են առ այն, որ առավել խոցելի են ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկություններ ունենալու առումով ***Աստվածաբանության***, ***Փիլիսոփայության և հոգեբանության***, ***Արևելագիտության, Հայ բանասիրության*** ֆակուլտետների, ինչպես նաև ***ԵՈՒ կենտրոնի*** շրջանավարտները: ***Աստվածաբանության***, ***Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետների շրջանավարտների ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածության փոփոխությունները կարելի է բացատրել հարցմանը մասնակցելու անկանոն սկզբունքներով /2020թ. նրանք տեղեկացվածության ավելի ցածր մակարդակ են դրսևորել, քան 2019թ.-ին/: Սակայն որոշ դեպքերում կարելի է խոսել միտումների մասին, երբ հետազոտությանը մասնակցության սկզբունքները համընկնում են: Պետք է նշել, որ ***Հայ բանասիրության*** ֆակուլտետի և ***ԵՈՒ կենտրոնի*** շրջանավարտները 2019թ. ավանդաբար առանձնանում են այդ հարցում խոցելիությամբ: Իսկ ***ՏՏ կենտրոնի***

շրջանավարտները ավանդաբար առանձնանում են բարձր տեղեկացվածության աստիճանով:

Գծապատկեր 10.

Ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածների տոկոսն ըստ ֆակուլտետների



1.2. Հարցմանը մասնակցած շրջանավարտների գնահատականների ընդհանուր նկարագիրը

Այս բաժնում վերլուծված են համեմատական կերպով շրջանավարտների բոլոր գնահատականները: Դա կարելի է իրականացնել, քանի որ բոլոր գնահատականները տրված են միևնույն 4 միավորանոց սանդղակով, որտեղ **2**-ը՝ նվազագույն գնահատականն է, իսկ **5**-ը՝ առավելագույն[1]:

Շրջանավարտների միջին գնահատականները բավականին բարձր են. նրանք տատանվում են 3 և 5 միավորի միջև, իսկ դա նշանակում է, որ միջինում գրեթե ոչ մի բնութագրիչ չի արժանացել բացասական գնահատականի: Եթե ամփոփենք շրջանավարտների ընդհանուր գնահատականները, ապա միջինում դա կազմում է *4,12 միավոր*, իսկ դա նշանակում է, որ այն գտնվում է «հիմնականում բարձր» և «բարձր» գնահատականների միջև: Նվազագույն գնահատականները վերաբերում են **գործնական հմտությունների տրմանը** և **օտար լեզուների իմացությանը,** նրանց տրված գնահատականների միջինները հավասար են համապատասխանաբար *3,6* և *3,7 միավոր*: Եվս համեմատաբար ցածր են հետևյալ գնահատականները. **Կարիերայի կենտրոնի դերի**, **համացանցի մատչելիության**, **համակարգչային սրահների մատչելիության**, **գրականության ժամանակակից լինելու**, ինչպես նաև **լաբորատորիաների կահավորման** միջին գնահատականները *չեն հասնում 4 միավորի*, այսինքն բավարարվածության աստիճանի:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ շրջանավարտները *առավել բարձր* են գնահատում նրանց **գիտական ղեկավարների աշխատանքը**՝ ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում: Բարձր են գնահատվել նաև **ֆակուլտետների ղեկավարությունը**, **պրոֆեսորադասախոսական կազմը** և **տեսական գիտելիքների տրման որակը**, ինչպես նաև **գնահատականների օբյեկտիվությունը**՝ և՛ ամփոփիչ ատեստավորման և՛ ընդհանուր գիտելիքների գնահատման /Գծապատկեր 11/:

[1] Ընդհանուր առմամբ կարող ենք պնդել, որ 2 և 3 գնահատականները նշանակում են համապատասխանաբար «ցածր» և «համեմատաբար ցածր» գնահատականները, իսկ 4 և 5 գնահատականները նշանակում են «համեմատաբար բարձր» և «բարձր» գնահատականները: Այդ մեկնաբանությունը կիրառվելու է ներկայացված վերլուծության համար:

Վերը նշված պատկերը գրեթե համընկնում է 2019թ. գնահատականների ընդհանուր պատկերին:

Գծապատկեր 11.

Բոլոր բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների բավարարվածության միջին գնահատականների



§2. Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ում ստացած կրթական ծրագրերից

2.1. Շրջանավարտների գնահատականների ընդհանուր նկարագիրը

Վերլուծելով կրթական ծրագրերից շրջանավարտների բավարարվածությունը, պետք է նշենք, որ աստիճանակարգը գրեթե չի փոխվել, սակայն առավել բարձր գնահատականի է արժանացել ***ավարտական/մագիստրոսական աշխատանքի ղեկավարի*** գնահատականը (տե՛ս Աղյուսակ 2.1): Այնուհետ շրջանավարտներն առավել բավարարված են ուսումնառության ընթացքում տրվող ***տեսական գիտելիքներից*** («լավ-գերազանց» գնահատականների միջև, և այս հարցում շրջանավարտները ավանդաբար դրսևորում են նմանատիպ կարծիքներ), այնուհետ բարձր են գնահատվել ***ամփոփիչ ատեստավորման գնահատման օբյեկտիվությունը*** և ***գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը***: Այդ բոլոր օրինաչափությունները նույն կերպ դրսևորվել են 2019թ. արդյունքներում: Հետաքրքրական է, որ համաձայն 2019թ. տվյալների կտրուկ բարձրացել էր ***պրակտիկաների օգտակարության*** գնահատականը, որը 2020թ. տվյալներով կրկին իջել է, զիջելով ***հաճախած դասընթացների օգտակարությանը*** և ***մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը***: Ի դեպ, պրակտիկաների գնահատականները բավականին տարակարծություն են առաջացնում շրջանավարտների մոտ, քանի որ գնահատականները խիստ *անհամասեռ* են: Ինչպես արդեն նշվել էր, բոլորից *ցածր* են գնահատել շրջանավարտները ***գործնական հմտությունները*** և ***օտար լեզուների իմացությունը***, ինչը արձանագրվել է նաև անցած տարիներին անցկացրած հետազոտությունների արդյունքում:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ 2020թ. գնահատականները դարձել են ավելի անհամասեռ և բևեռացված: Այսինքն ի համեմատ 2019 թ.-ի որոշ գնահատականներ բարձրացել են /մասնավորապես՝ ղեկավարների աշխատանքին վերաբերող/, իսկ որոշ գնահատականներ իջել են /մասնավորապես՝ վերաբերող օտար լեզուներին և գործնական հմտություններին/:

Աղյուսակ 2.1.

Կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսուցման գործընթացի կազմակերպմանը վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների բավարարվածության միջին գնահատականների

	Հարցվողների քանակ	Նվազագույն արժեք	Մեծագույն արժեք	**Միջին գնահատական**	Միջին քառակուսային շեղում
Բավարարվածությունը մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից	289	2	5	**4.76**	.625
Բավարարվածությունը ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից	530	2	5	**4.65**	.759
Տեսական գիտելիքների տրման գնահատական	838	2	5	**4.46**	.749
Ամփոփիչ ատեստավորման գնահատական	807	2	5	**4.33**	.925
Գիտելիքի գնահատման օբյեկտիվության գնահատական	825	2	5	**4.31**	.837
Հաճախած դասընթացների օգտակարության գնահատական	831	2	5	**4.21**	.811
Մասնագիտական կարողությունների ձեռքբերման գնահատական	835	2	5	**4.14**	.855
Պրակտիկաների օգտակարության գնահատական	718	2	5	**4.01**	1.142
Օտար լեզուների իմացության գնահատական	805	2	5	**3.70**	1.062
Գործնական հմտությունների տրման գնահատական	788	2	5	**3.61**	1.070

Ընդհանուր գնահատականների բաշխվածությունը կարելի է տեսնել Գծապատկեր 2.1-ում:

Գծապատկեր 2.1.

Կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսուցման գործընթացի կազմակերպմանը վերաբերող բնութագրիչների շրջանավարտների բավարարվածության գնահատականները



Հետաքրքրական է, որ 2020թ.-ին շրջանավարտների 7%-ից ավելին *չէր կողմնորոշվել* **գործնական հմտությունների** իրենց գնահատականներում, իսկ **օտար լեզուների իմացության** դեպքում *չկողմնորոշվածների* տոկոսը կազմել էր 5.4%:

2.2. Շրջանավարտների բավարարվածությունը մասնագիտական կարողություններից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.2.1), պետք է նշել նաև, որ ըստ կրթական աստիճանի տարբերությունները **նշանակալի են**՝ մագիստրոսների գնահատականները նշանակալիորեն ավելի բարձր են, քան բակալավրներինը:

Գծապատկեր 2.2.1.

Մասնագիտական կարողությունների ձեռքբերման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի 2019-20 թ.թ.



2020թ. գնահատականները *որոշ չափով իջել* են, համեմատած 2019թ. տվյալների հետ: Սակայն գնահատականների ընհանուր կառուցվածքը 2019թ. և 2020թ. պահպանվել է՝

ի տարբերություն նախորդ տարիների հետազոտությունների արդյունքների հետ, որոնք բավականին բարձր էին:

Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.2.2):

Գծապատկեր 2.2.2.

Մասնագիտական կարողությունների ձեռքբերման գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.3. Շրջանավարտների բավարարվածությունը տեսական գիտելիքներից

Գնահատականների ***տարբերությունները*** **նշանակալի են** ըստ կրթական աստիճանի, այսինքն՝ մագիստրոսները նշանակալիորեն ավելի բարձր են գնահատում տեսական գիտելիքները: Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.3.1):

Գծապատկեր 2.3.1.

Տեսական գիտելիքների տրման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Գնահատականների կառուցվածքը ևս համապատասխանում է 2019թ. արդյունքներին, գնահատականները էականորեն չեն փոխվել:

Ըստ ֆակուլտետների գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.3.2):

Գծապատկեր 2.3.2.

Տեսական գիտելիքների տրման գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.4. Շրջանավարտների բավարարվածությունը գործնական հմտություններից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.4.1), սակայն այս հետազոտության համար տարբերությունները մագիստրատուրայի և բակալավրիատի շրջանավարտների համար **նշանակալի չեն՝** նույն միտումը արձանագրվել է նաև 2019թ.-ին: Այսինքն՝ և՛ *բակալավրիատի*, և՛ *մագիստրատուրայի* շրջանավարտները նմանատիպ *ցածր* գնահատականներ են տալիս: Ի դեպ, հարկ է նշել նաև, որ այս գնահատման գործում համեմատաբար ավելի շատ տոկոս են կազմում *չկողմնորոշված* շրջանավարտները /7%-ից ավելին/:

Գծապատկեր 2.4.1.

Գործնական հմտությունների մատուցման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի 2020թ.-ին



Համեմատության կարգով ստորև Գծապատկեր 2.4.1a-ում ներկայացրած են 2019թ. տվյալները, որտեղից երևում է 2020թ.-ի գնահատականների կտրուկ նվազումը և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում:

Գծապատկեր 2.4.1a.

Գործնական հմտությունների մատուցման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի 2019թ.-ին



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.4.2):

Գծապատկեր 2.4.2.

Գործնական հմտությունների մատուցման գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.5. Շրջանավարտների բավարարվածությունը օտար լեզուների իմացությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ օտար լեզուների իմացության գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.5.1)։ Ընդ որում այստեղ էլ տեսնում ենք նույն միտումը. ի տարբերություն 2015-16 թ.թ. տվյալների տարբերություններն ըստ կրթական աստիճանի դարձել են **ոչ նշանակալի**, այսինքն բոլոր շրջանավարտները նմանատիպ գնահատականներ են տալիս։

Սակայն այս դեպքում ևս մենք չենք կարող կոռեկտ համեմատություններ անել, քանի որ, ինչպես արդեն նշել էինք, այս հետազոտությանը մասնակցել են ավելի բարձր առաջադիմություն և ակտիվություն ցուցաբերած շրջանավարտները։

Գծապատկեր 2.5.1.

Օտար լեզուների իմացության ապահովման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ի դեպ, այս դեպքում էլ գրանցվեց նման օրինաչափություն. ***օտար լեզուների իմացության*** գնահատականները *կտրուկ նվազել* են 2020թ.-ին և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում՝ համեմատած 2019թ.:

Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.5.2):

Գծապատկեր 2.5.2.

Օտար լեզուների իմացության ապահովման գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.6. Շրջանավարտների բավարարվածությունը հաճախած դասընթացների օգտակարությունից

Այս բնութագրի վերաբերյալ նկատվում են նույն օրինաչափությունները. ըստ կրթական աստիճանի գնահատականների տարբերությունը այս հետազոտության համար **նշանակալի չեն,** այսինքն, բակալավրներն ու մագիստրոսները նմանատիպ են գնահատում հաճախած դասընթացների օգտակարությունը:

Գծապատկեր 2.6.1.

Հաճախած դասընթացների օգտակարության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի 2020թ.



Համեմատելով 2019թ.-ի տվյալների հետ, 2020թ.-ին այս գնահատականներում էլ ևս գրանցվում է բավարարվածության *անկում*, ինչը կարելի է տեսնել Գծապատկեր

2.6.1a-ում: Ընդ որում բակալավրների գնահատականների կառուցվածքը բավականին փոփոխվել է՝ կրելով լուրջ նվազում:

Գծապատկեր 2.6.1a.

Հաճախած դասընթացների օգտակարության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի 2019թ.



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.6.2):

Գծապատկեր 2.6.2.

Հաճախած դասընթացների օգտակարության գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.7. Շրջանավարտների բավարարվածությունը պրակտիկաների օգտակարությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.7.1): Այս դեպքում տարբերությունները ևս **ոչ նշանակալի** են տարբերվում. բոլոր շրջանավարտների գնահատականները նմանատիպ են: Ի դեպ այս դեպքում էլ չպատասխանած ուսանողների տոկոսը բավականին մեծ է:

Գծապատկեր 2.7.1.

Պրակտիկաների օգտակարության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Այս դեպքում էլ պետք է փաստենք, որ գնահատականները՝ համեմատած 2019թ.-ի տվյալների հետ բավականին նվազել են, սակայն գնահատականների կառուցվածքը մնացել է գրեթե նույնը:

Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.7.2):

Գծապատկեր 2.7.2.

Պրակտիկաների օգտակարության գնահատականները ըստ ֆակուլտետների



2.8. Շրջանավարտների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.8.1)։ Հետաքրքրական է, որ այս դեպքում, ինչպես նաև 2019թ,-ին, չնայած, որ հետազոտությանը մասնակցել են ավելի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներ, ըստ կրթական աստիճանի՝ տարբերությունները մնացել են **նշանակալի.** մագիստրոսները ավելի գոհ են, քան բակալավրները։

Ըստ երևույթի այս տարբերությունները կարելի է համարել էական։

Գծապատկեր 2.8.1.

Գիտելիքների գնահատման օբյեկտիվության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Այս դեպքում էլ 2020 թ.-ին գնահատականները որոշ չափով իջել են, սակայն ոչ էական:

Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.8.2):

Գծապատկեր 2.8.2.

Գիտելիքների գնահատման օբյեկտիվության գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.9. Շրջանավարտների բավարարվածությունը ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.9.1)։ Պետք է նշել, որ այս գնահատականների համար տարբերությունները **նշանակալի է** և դիտվում են վերը նշված օրինաչափությունները բակալավրների և մագիստրոսների գնահատականների համար. մագիստրոսները նշանակալիորեն ավելի գոհ են ամփոփիչ գնահատականների օբյեկտիվությունից, քան բակալավրները։

Գծապատկեր 2.9.1.

Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Այս դեպքում էլ գնահատականները որոշ չափով նվազել են՝ համեմատած 2019թ. տվյալների հետ:

Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.9.2):

Գծապատկեր 2.9.2.

Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.10. Շրջանավարտների բավարարվածությունը ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.10.1): Պետք է նշել, որ այս գնահատականների համար տարբերությունները **ոչ նշանակալի** են և ըստ էության չեն տարբերվում տարբեր կրթական աստիճանների շրջանավարտների համար: Այդ գնահատականները ամենաբարձր գնահատականներն են, համեմատած այլ գնահատականների հետ:

Գծապատկեր 2.10.1.

Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



2020թ. այս գնահատականների համար բավարարվածությունը բավականին *աճել* են՝ ի տարբերություն այլ վերը վերլուծված գնահատականների:

Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.10.2):

Գծապատկեր 2.10.2.

Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.11. Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը շրջանավարտների կողմից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ ղեկավարների աշխատաժամերի գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.11.1): Պետք է նշել, որ մագիստրատուրայի շրջանավարտներն ընդհանուր առմամբ համարում են ավելի աշխատատար նրանց ղեկավարների աշխատանքը: Ընդ որում 2020թ.-ին ըստ շրջանավարտների գնահատականների ղեկավարները ավելի շատ ժամանակ են հատկացնում ուսանողներին:

Գծապատկեր 2.11.1.

Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը շրջանավարտների կողմից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկերներ 2.11.2a և 2.11.2b համապատասխան բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների համար):

Գծապատկեր 2.11.2a.

Ավարտական աշխատանքի /բակալավրիատ/ գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը շրջանավարտների կողմից ըստ ֆակուլտետի



Գծապատկեր 2.11.2b.

Մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը շրջանավարտների կողմից ըստ ֆակուլտետի



§3. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից

Շրջանավարտների միջին բավարարվածությունը ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից ընդհանուր առմամբ ավելի *ցածր* է, քան ուսումնառությանը վերաբերող ընդհանուր միջին բավարարվածությունը (համեմատությունը կարելի է անել, քանի որ չափման համակարգերը նույնական են): 2020թ.-ի դրությամբ այս ոլորտում շրջանավարտների գոհունակությունը որոշակի փոփոխություններ է կրել: Եթե 2019թ.-ին շրջանավարտները առավել բավարարված էին ***լսարանային պայմաններով***, ապա 2020թ.-ին առավել գոհունակության է արժանացել ***գրադարանների կահավորումը***: 2020թ.-ին գրադարանից բավարարվածությունը համեմատած այլ բնութագրերի ավելի բարձր է, քան 2019թ.-ին բավականին բարձր տեղ զբաղեցրած ***համակարգչային սրահների մատչելիությունը:*** Իսկ բավարարվածությունը ***կարիերայի կենտրոնից*** և բավարարվածությունը ***համացանցի մատչելիությունից*** արդեն իսկ կանոնավոր վերջին տեղերն են զբաղեցնում:

Այս դեպքում էլ կարող ենք փաստել, որ գնահատականներն 2020թ.հետազոտության համար *բավականին նվազել* են՝ համեմատած 2019թ.-ի: Գնահատականների միջինացված տվյալները կարելի է տեսնել Աղյուսակ 3.1 –ում:

Աղյուսակ 3.1.

Ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների բավարարվածության միջին գնահատականների

	Հարցվողների քանակ	Նվազագույն արժեք	Մեծագույն արժեք	**Միջին գնահատական**	Միջին քառակուսային շեղում
Բավարարվածությունը գրադարանի կահավորումից	802	2	5	**4.15**	.922
Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից	819	2	5	**4.06**	.928
Բավարարվածությունը գրադարանում սպասարկումից	788	2	5	**3.97**	1.044
Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից	166	2	5	**3.86**	1.055
Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց	766	2	5	**3.84**	1.018
Բավարարվածությունը համակարգչային սրահների մատչելիությունից	785	2	5	**3.81**	1.068
Բավարարվածությունը համացանցի մատչելիությունից	773	2	5	**3.75**	1.074
Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից	673	2	5	**3.75**	1.114

Գծապատկեր 3.0-ի տվյալներն վկայում են, որ ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների վերաբերյալ առավել շատ են չտեղեկացված շրջանավարտները: Ընդ որում, 2020թ. Կարիերայի կենտրոնի գործունեությանը ծանոթ չեն ավելի քան 20% շրջանավարտներ: Բնագիտական մասնագիտությունների շրջանավարտների 14%-ից ավելին տեղյակ չեն լաբորատորիաներից, իսկ 10%- տեղյակ չէ գրադարանների գրականության ժամանակակից լինելուց: Համացանցի մատչելիության վերաբերյալ կարծիք չունեն 9%-ից ավելին շրջանավարտներ:

Գծապատկեր 3.0.

Ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների բավարարվածության գնահատականների



3.1. Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.1), տարբերությունները ***նշանակալի չեն,*** այս գնահատականներում գրանցվել է միտում, որ մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն *նվազել են՝* համեմատած 2019թ.՝ նմանվելով բակալավրիատի շրջանավարտների գնահատականներին: Փաստորեն **լսարանային պայմաններից** գոհունակությունը նշանակալի չի տարբերվում բակալավր և մագիստրոս շրջանավարտների համար:

Գծապատկեր 3.1.1.

Շրջանավարտների բավարարվածությունը լսարանային պայմաններից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածությունը լսարանային պայմաններից ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.1.2-ում:

Գծապատկեր 3.1.2.

Ուսանողների բավարարվածությունը լսարանային պայմաններից ըստ ֆակուլտետների



3.2. Բավարարվածությունը համակարգչային սրահներից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.2.1), այս դեպքում ևս տարբերությունները ***նշանակալի չեն***, ընդ որում համակարգչային սրահների առումով աննշան իջել են և՛ բակալավրներների, և՛ մագիստրոսների գնահատականները:

Գծապատկեր 3.2.1.

Շրջանավարտների բավարարվածությունը համակարգչային սրահներից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածությունը *համակարգչային սրահներից* ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.2.2-ում:

Գծապատկեր 3.2.2.

Ուսանողների բավարարվածությունը համակարգչային սրահներից ըստ ֆակուլտետների



3.3. Բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.3), տարբերությունները ***նշանակալի չեն***, և՛ *բակալավրիատի*, և՛ *մագիստրատուրայի* շրջանավարտների գնահատականները աննշան *նվազել են*:

Գծապատկեր 3.3.1.

Շրջանավարտների բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածությունը *Համացանցի մատչելիությունից* ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.3.2-ում:

Գծապատկեր 3.3.2.

Ուսանողների բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից ըստ ֆակուլտետների



3.4. Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.4), այս դեպքում մագիստրոսների գնահատականները նշանակալիորեն ավելի բարձր են, քան բակալավրների գնահատականները, քանի որ տարբերությունները դարձել են ***նշանակալի:*** Պետք է նշել, որ Կարիերայի գործունեությունից շրջանավարտների մի ստվար զանգված ընդհանրապես տեղեկացված չէ, ընդ որում բակալավր շրջանավարտների մոտ 24%-ը չունի տեղեկություններ Կարիերայի կենտրոնի գործունեության մասին: Ընդ որում, չտեղեկացվածների թիվը կտրուկ աճել է 2020թ.-ին:

Գծապատկեր 3.4.1.

Շրջանավարտների բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.4.2-ում:

Գծապատկեր 3.4.2.

Ուսանողների բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից ըստ ֆակուլտետների



3.5. Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.5.1), այս դեպքում մագիստրոսների գնահատականների աննշան նվազել են, տարբերությունները դարձել են ***ոչ նշանակալի***, չնայած, որ մագիստրոսների գնահատականները մի փոքր ավելի բարձր են: Նշենք նաև, որ այս հարցին պատասխանել են միայն բնագիտական մասնագիտությունների շրջանավարտները:

Գծապատկեր 3.5.1.

Շրջանավարտների բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից ըստ կրթական աստիճանի



Ինչպես տեսնում ենք Գծապատկերից բավականին մեծ է այն շրջանավարտների թիվը, ովքեր չեն կողմնորոշվել այդ հարցում:

Շրջանավարտների բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.5.2-ում:

Գծապատկեր 3.5.2.

Ուսանողների բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից ըստ ֆակուլտետների



3.6. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ գրադարանից

Ինչ վերաբերում է ***գրադարանին*** տրվող գնահատականներին, ապա, ինչպես արդեն նշվել էր, այդ գնահատականները համեմատաբար բարձր են, և ի համեմատ 2019թ.-ին բավականին *բարձրացել* են: Նաև պետք է նշել, որ *գրականության ժամանակակից* լինելու հանգամանքը արժանացել է շրջանավարտների համեմատաբար ավելի *ցածր* գոհունակությանը՝ համեմատած գրադարանի կահավորանքի և սպասարկումի գնահատականների հետ /այս տենդենցն արդեն դարձել է կանոնավոր/: Ի դեպ, ինչպես արդեն նշվել էր, գրադարանի կահավորանքը արժանացել էր շրջանավարտների ամենաբարձր գնահատականի այս ոլորտում:

3.6.1. Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.6.1), տարբերությունները ***նշանակալի չեն.*** շրջանավարտների գնահատականները *իջել* են՝ համեմատած 2019թ.- ի հետ:

Գծապատկեր 3.6.1.

Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածությունը *գրադարանի գրականության ժամանակակից լինելուց* ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.6.2-ում:

Գծապատկեր 3.6.2.

Ուսանողների բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց ըստ ֆակուլտետների



3.6.2. Բավարարվածությունը գրադարանի կահավորանքից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.7), տարբերությունները ***նշանակալի են***, այս գնահատականները միակն են այս բաժնում, որոնք բավականին *բարձրացել* են:

Գծապատկեր 3.7.1.

Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի կահավորանքից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածությունը *գրադարանի կահավորանքից* ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.7.2-ում:

Գծապատկեր 3.7.2.

Ուսանողների բավարարվածությունը գրադարանի կահավորանքից ըստ ֆակուլտետների



3.6.3. Բավարարվածությունը գրադարանում սպասարկումից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.8.1), տարբերությունները ***նշանակալի չեն***, և՛ *բակալավրների*, և՛ *մագիստրոսների* գնահատականները *իջել* են:

Գծապատկեր 3.8.1.

Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանում սպասարկումից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածությունը *գրադարանում սպասարկումից* ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.8.2-ում:

Գծապատկեր 3.8.2

Ուսանողների բավարարվածությունը գրադարանում սպասարկումից ըստ ֆակուլտետների



§4. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ի միջավայրից

ԵՊՀ միջավայրից շրջանավարտների բավարարվածության աստիճանը, համեմատած մնացած գնահատականների հետ, միջինում *ամենաբարձրն* է: Այդ միտումները պահպանվում են տարեց տարի:

Սակայն այս հետազոտության շրջանակներում շեղվել է տարեց տարի դրսևորվող այն օրինաչափությունը, որ ամենաբարձր գնահատականների արժանանում էր ***ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը:*** 2019թ.-ին առավել բարձր էր գնահատվել ***ֆակուլտետի ղեկավարությանը:*** Սակայն 2020թ.-ին գոհունակությանը ***պրոֆեսորադասախոսական կազմից*** հավասարվել է ***ֆակուլտետների ղեկավարության*** գործունեությանը, իսկ 3-րդ տեղում է գնահատվել ***ԵՊՀ ղեկավարության*** գործունեությունը /տե՛ս Գծապատկեր 4.0 և Աղյուսակ 15/:

Գծապատկեր 4.0.

ԵՊՀ-ի միջավայրին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգը ըստ շրջանավարտների գոհունակության գնահատականների



Պետք է նշել, որ ըստ գոհունակության գնահատման, համեմատաբար ցածր տեղ զբաղեցնող շրջանավարտների ***ուսանողական կառույցների*** գործունեությունը

շրջանավարտների կողմից ոչ միանշանակ է գնահատվել, ինչի մասին վկայում են միջին քառակուսային շեղման համեմատաբար բարձր արժեքը /մանրամասն տվյալները տե՛ս Աղյուսակ 15-ում/: Պետք է նշել, որ այս բոլոր այդ գնահատականները նվազել են 2020թ.-ին:

Աղյուսակ 15

ԵՊՀ-ի միջավայրին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների գոհունակության միջին գնահատականների

	Հարցվողների քանակը	Նվազագույն արժեք	Մեծագույն արժեք	**Միջին գնահատականը**	Միջին քառակուսային շեղումը
Գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից	828	2	5	**4.51**	.794
Գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից	833	2	5	**4.51**	.712
Գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից	809	2	5	**4.17**	.909
Գոհունակությունը ուսանողներին արձագանքելու ընթացակարգից	752	2	5	**4.06**	.969
Գոհունակությունը ուսանողական կառույցներից	714	2	5	**3.96**	1.097

Պետք է նշել, որ ըստ գոհունակության գնահատման, համեմատաբար ցածր տեղ զբաղեցնող շրջանավարտների ***ուսանողական կառույցների*** գործունեությունը

շրջանավարտների կողմից ոչ միանշանակ է գնահատվել, ինչի մասին վկայում են միջին քառակուսային շեղման համեմատաբար բարձր արժեքը /մանրամասն տվյալները տե՛ս Աղյուսակ 15-ում/: Պետք է նշել, որ այս բոլոր այդ գնահատականները նվազել են 2020թ.-ին:

Ուսանողների կառույցների գործունեությանը տեղյակ չեն 16%-ից ավելին շրջանավարտներ, իսկ ***ուսանողներին արձագանքելու*** ընթացակարգերին անտեղյակ շրջանավարտների թիվը ավելին է, քան 11%-ը /տե՛ս Գծապատկեր 4.0/:

4.1. Գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.1): Նշենք, որ այդ գնահատականները ***նշանակալի են*** տարբերվում մագիստրոսների և բակալավրների համար, այդ միտումը շարունակական է տարբեր տարիների համար, սակայն ի տարբերություն անցյալ տարվա հետազոտությանը *մագիստրատուրայում* գնահատականները *աճել* են:

Գծապատկեր 4.1.

Շրջանավարտների գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 4.2):

Գծապատկեր 4.2.

Շրջանավարտների գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից ըստ ֆակուլտետների



4.2. Գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.3), տարբերությունները դարձել են ***նշանակալի***: Ի դեպ և՛ մագիստրոսների, և՛ բակալավրների այս դեպքում էլ *աճել* են:

Գծապատկեր 4.3.

Շրջանավարտների գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 4.4):

Գծապատկեր 4.4.

Շրջանավարտների գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից ըստ ֆակուլտետների



4.3. Գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.5), տարբերությունները ***նշանակալի*** են, այսինքն մագիստրոսները դրսևորում են ավելի *բարձր* գոհունակություն, քան բակալավրները: Հետաքրքրական է, որ *բակալավրների* գոհունակությունը որոշ չափով *աճել* է, իսկ *մագիստրոսներնը՝ նվազել*:

Գծապատկեր 4.5.

Շրջանավարտների գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 4.6):

Գծապատկեր 4.6.

Շրջանավարտների գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից ըստ ֆակուլտետների



4.4. Գոհունակությունը ուսանողական կառույցներից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.7), տարբերությունները ***նշանակալի չեն*** (ինչպես և անցյալ տարի), այսինքն՝ մագիստրատուրայի և բակալավրիատի գնահատականները չեն տարբերվում: 2020թ. մագիստրատուրայի և բակալավրիատի շրջանավարտների գնահատականները *նվազել* են:

Այստեղ բավականին մեծ տոկոս են կազմում չկողմնորոշված շրջանավարտների թիվը:

Գծապատկեր 4.7.

Շրջանավարտների գոհունակությունը ուսանողական կառույցներից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 4.8):

Գծապատկեր 4.8.

Շրջանավարտների գոհունակությունը ուսանողական կառույցներից ըստ ֆակուլտետների



4.5. Գոհունակությունն ուսանողներին արձագանքելու ընթացակարգից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.9), տարբերությունները ***նշանակալի են***: Մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի *բարձր* են, քան անցյալ տարի:

Ինչպես նշել ենք, այդ գնահատականները առանձնանում են շրջանավարտների բավականին ցածր տեղեկացվածությամբ:

Գծապատկեր 4.9.

Շրջանավարտների գոհունակությունը ուսանողներին արձագանքելու ընթացակարգից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 4.10):

Գծապատկեր 4.10.

Շրջանավարտների գոհունակությունը ուսանողներին արձագանքելու ընթացակարգից ըստ ֆակուլտետների



4.6. Կոռուպցիայի հնարավոր դրսևորումները

Կոռուպցիայի դրսևորումները հետազոտությունում ուսումնասիրվել են 2 հիմնական դրսևորումներով.

- կաշառքի միջոցով գնահատականի ստացում,
- մասնավոր վճարովի պարապմունքների միջոցով գնահատականի ստացում:

➔ Ի դեպ *միջնորդի միջոցով գնահատականի ստացման* մեխանիզմը /որը կանոնավոր համեմատական բարձր դիրքեր էր զբաղեցնում/ դուրս է մնացել հետազոտության շրջանակներից:

Կաշառքի և վճարովի պարապմունքների դեպքերը չեն գերազանցում համապատասխանաբար 0.5% և 3.4%: Ընդհանուր նշված կոռուպցիայի դրսևորումները չեն գերազանցում 3.9%-ը:

Պետք է նշել, որ մագիստրատուրայում **կաշառքի դեպքերը** ընդհանրապես բացակայում են, չնայած որ *չպատասխանողների* թիվը գերազանցում է *բակալավրիատում* չպատասխանողներ թվից: Ըստ այդմ, կաշառքի առկայությունը **նշանակալի** տարբերվում է *բակալավրիատի* և *մագիստրատուրայի* համար: Իսկ վճարովի պարապմունքների դեպքերը բակալավրիատում ավելի շատ են, քան մագիստրատուրայում, սակայն այդ տարբերությունը ***նշանակալի չէ*** /փոքր թվի պատճառով/:

Գծապատկերներ 4.11-ում ներկայացված են ընդհանուր կոռուպցիայի դեպքերի առկայության տոկոսային հարաբերություններն ըստ կրթական աստիճանի:

Գծապատկեր 4.11.

Կոռուպցիայի առկայությունն ըստ կրթական աստիճանի





Ստորև բերվում է կոռուպցիայի դեպքերի բաշխումը՝ ըստ ֆակուլտետների:

Աղյուսակ 4.1.

Կոռուպցիայի դրսևորումներն ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	Հարցմանը մասնակցած շրջանավարտների քանակը	Կոռուպցիայի դրսևորումների ընդհանուր քանակը	Կոռուպցիայի դեպքերը նշած ուսանողների տոկոսը
Ռուս Բանասիրության ֆակուլտետ	14	**3**	21.4%
Տնտեսագիտության և Կառավարման ֆակուլտետ	52	**4**	7.7%
Կենսաբանության ֆակուլտետ	27	**2**	7.4%
Ինֆորմատիկայի և Կիրառական Մաթեմատիկայի ֆակուլտետ	29	**2**	6.9%
Ֆարմացիայի Ինստիտուտ	35	**2**	5.7%
Միջազգային Հարաբերությունների ֆակուլտետ	142	**8**	5.6%
Արևելագիտության ֆակուլտետ	38	**2**	5.3%
Ֆիզիկայի ֆակուլտետ	20	**1**	5%
Փիլիսոփայության և Հոգեբանության ֆակուլտետ	27	**1**	3.7%
Հայ Բանասիրության ֆակուլտետ	90	**3**	3.3%
Եվրոպական Լեզուների և Հաղորդակցության ֆակուլտետ	109	**3**	2.8%
Մաթեմատիկայի և Մեխանիկայի ֆակուլտետ	38	**1**	2.6%
Իրավագիտության ֆակուլտետ	71	**1**	1.4%
Աստվածաբանության ֆակուլտետ	1	**0**	0%
Եվրոպական Ուսումնասիրությունների Կենտրոն	1	**0**	0%
Սոցիոլոգիայի ֆակուլտետ	3	**0**	0%
ՏՏ Կրթական և Հետազոտական Կենտրոն	8	**0**	0%
Քիմիայի ֆակուլտետ	9	**0**	0%
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ	13	**0**	0%
Պատմության ֆակուլտետ	19	**0**	0%
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ	31	**0**	0%
Աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետ	34	**0**	0%
Մանկավարժության և Կրթության Զարգացման Կենտրոն	40	**0**	0%
Total	851	**33**	3.9%

Աղյուսակ 4.1-ում առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ նշվել է կոռուպցիայի որևէ դեպք, նրանք կարգավորված են ըստ հարցմանը մասնակցած շրջանավարտների ընդհանուր քանակում կոռուպցիայի դեպքերի տոկոսի: Այն ֆակուլտետները, որտեղ չեն նշվել կոռուպցիայի դեպքեր դասակարգված են ըստ հարցմանը մասնակցած շրջանավարտների քանակի, հաշվի առնելով այն

հանգամանքը, որ ինչքան շատ շրջանավարտներ են մասնակցել հարցմանը և չեն նշել կոռուպցիայի դեպքեր, այնքան քիչ է հավանականությունը, որ տվյալ ֆակուլտետում առկա են կոռուպցիայի դեպքեր:

§5. ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը

Ընդհանուր առմամբ շրջանավարտները բարձր են գնահատում ԵՊՀ-ում ստացած կրթությունը, ըստ որի՝ գնահատականները համասեռ են, միջին արժեքը կազմում է 4,27 միավոր, ինչը ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականի բաշխումը տե՛ս Գծապատկեր 5.1-ում:

Գծապատկեր 5.1.

ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը



Հետաքրքրական է, որ ***բակալավրիատի*** և ***մագիստրատուրայի*** շրջանավարտների գնահատականները նշանակալիորեն **տարբերվում են,** մագիստրոսներն ավելի բարձր են գնահատում ստացված կրթությունը, քան բակալավրները /տե՛ս Գծապատկեր 5.2/: Այդ միտումը պահպանվում էր նաև նախորդ տարիներին:

Գծապատկեր 5.2.

Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ում ստացած կրթությունից ըստ կրթական աստիճանի



Պետք է նշել, որ այս գնահատականների առումով ևս առկա են վերը նշված օրինաչափությունները. այսինքն՝ *ֆակուլտետը* հիմնական գործոն է հանդիսանում այս գնահատականների համար ևս:

Գնահատականների ընդհանուր բաշխումն ըստ ֆակուլտետների տե՛ս Գծապատկեր 5.3-ում:

Գծապատկեր 5.3.

ԵՊՀ-ում ստացած կրթության գնահատականներն ըստ ֆակուլտետների



ԵՊՀ ընդունվելու խորհուրդ տալու առումով գնահատականների բաշխումը գրեթե չի փոխվել: Պետք է նշել, որ մագիստրոսները **նշանակալիորեն ավելի բարձր** են գնահատում նրանց կրթությունը ԵՊՀ-ում, քան բակալավրները:

Գծապատկեր 5.5.

Շրջանավարտների գնահատականներն ընկերներին խորհուրդ տալ ընդունվել ԵՊՀ ըստ կրթական աստիճանի



Ֆ*ակուլտետը* հիմնական գործոն է հանդիսանում այս գնահատականների համար ևս:

Գնահատականների ընդհանուր բաշխումն ըստ ֆակուլտետների տե՛ս Գծապատկեր 5.6-ում:

Գծապատկեր 5.6.

Շրջանավարտների տոկոսը, ովքեր ընկերներին խորհուրդ կտան սովորել ԵՊՀ-ում ըստ ֆակուլտետների



Ամփոփում

- Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների համախմբության կառուցվածքը նշանակալիորեն տարբերվում է գլխավոր համախմբության կառուցվածքից։ Ամփոփելով տվյալները կարող ենք եզրակացնել, որ հետազոտությանը մասնակցել են ավելի *բարձր առաջադիմություն* դրսևորող շրջանավարտներ, ովքեր ավելի բարձր գոհունակություն են ցուցաբերում *ֆակուլտետի ղեկավարության* գործունեությունից։ Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ հարցմանն են մասնակցել հիմնականում *իգական* սեռի ներկայացուցիչները։

  Այլ կերպ ասած, այս հետազոտության ընտրանքը կարելի է անվանել ***կամավորների*** ընտրանք։
- Հարցմանը մասնակցած շրջանավարտները ի տարբերություն բոլոր շրջանավարտների համախմբությանը բնութագրվում են *մագիստրատուրայի* կրթական աստիճանի, ինչպես նաև *առկա* ուսուցման ձևի շրջանավարտների գերակշռությամբ։
- Ընդհանուր առմամբ գնահատականները շեղված են ի օգուտ ***Հայ Բանասիրության, Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետների, ինչպես նաև ***Մանկավարժության և Կրթության Զարգացման Կենտրոնի*** շրջանավարտների, որոնք նախորդ հետազոտություններում դրսևորել են բավականին բարձր գոհունակություն կրթական գործընթացի տարբեր կողմերից։ Ինչպես նաև գնահատականները շեղված են ի վնաս ***Տնտեսագիտության և կառավարման, Աշխարհագրության և երկրաբանության***, ***Պատմության, Սոցիոլոգիայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտների գնահատականները։ Պետք է նշել, որ նախորդ հետազոտությունների արդյունքում ***Տնտեսագիտության և կառավարման, Սոցիոլոգիայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները առանձնանում էին համեմատաբար ավելի ցածր գոհունակությամբ, իսկ ***Աշխարհագրության և երկրաբանության***, ***Պատմության*** ֆակուլտետների շրջանավարտները տարբեր տարիներին տարբեր գոհունակության աստիճան էին դրսևորում։

- Չնայած, որ վերլուծությունն **ըստ ֆակուլտետների** այդքան էլ կոռեկտ չէ ելնելով հարցման մասնակցած շրջանավարտների համախմբության *շեղումների* ըստ ֆակուլտետների կառուցվածքի, այնուամենայնիվ որոշակի եզրակացություններ կարելի է անել: Ինչպես և նախորդ տարիներին տարբեր ֆակուլտետներում շրջանավարտները տարբեր դիրքորոշումներ են դրսևորում՝ գնահատելով կրթության այս կամ այն բաղադրիչը: Կարելի է առանձնացնել ֆակուլտետներ, որոնց շրջանավարտները դրական են դիրքորոշված և կրթության գրեթե բոլոր կողմերից բարձր գոհունակություն են հայտնում; դրանք պայմանական կարելի է անվանել «**բավարարված ֆակուլտետներ**»: Մյուս բևեռում գտնվում են «**չբավարարված ֆակուլտետներ**», որոնց շրջանավարտները առանձնանում են կրթության գրեթե բոլոր կողմերի ցածր գնահատականներով: Նաև այսպես կոչված «միջին դասը» կազմում են այն ֆակուլտետները, որոնց շրջանավարտները տարաբնույթ գնահատականներ են դրսևորում, հիմնականում դրսևորելով միջին գնահատականներ: Պետք է նշել, որ տարեց տարի այդ խմբերի կազմը որոշ չափով փոխվում է հարցումներին մասնակցելու տարբեր տարիներին տարբեր մեխանիզմների և գործոնների պատճառով:
- «**Բավարարված**» ֆակուլտետների դասին այս տարի կարելի է վերագրել ***Մանկավարժության և Կրթության Զարգացման Կենտրոնը, Իրավագիտության, Կենսաբանության, Քիմիայի, Հայ և Ռուս բանասիրության*** ֆակուլտետները:
- «**Չբավարարված**» ֆակուլտետների դասին կարող ենք վերագրել ***Ինֆորմատիկայի և Կիրառական Մաթեմատիկայի, Տնտեսագիտության և կառավարման, Ֆիզիկայի*** ֆակուլտետները:

  «**Չբավարարված մի քանի շրջանավարտներ**» կարելի է անվանել ***Աստվածաբանության, Սոցիոլոգիայի*** ֆակուլտետների, ինչպես նաև ***Եվրոպական Ուսումնասիրությունների Կենտրոնի*** շրջանավարտներին:

- «**Միջին դասին**» կարելի է վերագրել մնացած այլ ֆակուլտետների շրջանավարտներին:
- **Աշխատաշուկայում** *առավել ընդգրկված* են ***ՏՏ կենտրոնի***, ***Ինֆորմատիկայի և Կիրառական մաթեմատիկայի, Ֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները, իսկ

առավել *ցածր* ընդգրկվածությունը ունեն ***Արևելագիտության, Պատմության, Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետների շրջանավարտները:

- ***ՏՏ կենտրոնի*** շրջանավարտների մասնագիտացվածության աստիճանը, ինչպես և գրեթե բոլոր տարիներին ավանդաբար զբաղեցնում է բարձր տեղ: Նույնը վերաբերում է ***Ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների*** ֆակուլտետի շրջանավարտներին: ***Ֆիզիկայի*** և ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետների հարցվողները ևս զբաղեցնում են բարձր տեղ աշխատաշուկայում ներգրավվածության տեսանկյունից: ***ԵՈՒ կենտրոնի***ց հարցվողները ավանդաբար ունեն բարձր ներգրավվածություն աշխատաշուկայում, սակայն մասնագիտացվածության աստիճանը նրանց մոտ բավականին ցածր է: 2020թ. այն հավասարվել է 0-ի:
- Առավել խոցելի են ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկություններ ունենալու առումով ***Աստվածաբանության***, ***Փիլիսոփայության և հոգեբանության***, ***Արևելագիտության, Հայ բանասիրության*** ֆակուլտետների, ինչպես նաև ***ԵՈՒ կենտրոնի*** շրջանավարտները: ***Աստվածաբանության***, ***Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետների շրջանավարտների ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածության փոփոխությունները կարելի է բացատրել հարցմանը մասնակցելու անկանոն սկզբունքներով /2020թ. նրանք տեղեկացվածության ավելի ցածր մակարդակ են դրսևորել, քան 2019թ.-ին/:
- Հետազոտության արդյունքները վկայում են, որ շրջանավարտները *առավել բարձր* են գնահատում նրանց **գիտական ղեկավարների աշխատանքը՝** ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում: Բարձր են գնահատվել նաև **ֆակուլտետների ղեկավարությունը**, **պրոֆեսորադասախոսական կազմը** և **տեսական գիտելիքների տրման որակը**, ինչպես նաև **գնահատականների օբյեկտիվությունը՝** և՛ ամփոփիչ ատեստավորման և՛ ընդհանուր գիտելիքների գնահատման:
- *Ամենացածր* բավարարվածություն շրջանավարտները ցուցաբերել են **գործնական հմտությունների տրման որակին**, այնուհետ **օտար լեզուների իմացությանը**, **Կարիերայի կենտրոնի գործունեությանը**, ինչպես նաև **համացանցի մատչելիությանը**, **համակարգչային սրահների մատչելիությանը**, **գրականության ժամանակակից լինելուն** և **լաբորատորիաների կահավորմանը**:

- **Կրթական ծրագրերից** բավարարվածությունը որոշ չափով *նվազել* է՝ համեմատած 2019թ. գնահատականների հետ: Բացառություն է կազմում միայն ***գոհունակությունը գիտական ղեկավարներից***. այն բավականին *աճել* է 2020թ.-ին: Կտրուկ *նվազում* են կրել ***գործնական հմտությունների մատուցման***, ***օտար լեզուների իմացության***, ***հաճախած դասընթացների օգտակարության*** գնահատականները:
- Այնուհետ շրջանավարտներն առավել բավարարված են ուսումնառության ընթացքում տրվող ***տեսական գիտելիքներից*** («լավ-գերազանց» գնահատականների միջև, և այս հարցում շրջանավարտները ավանդաբար դրսևորում են նմանատիպ կարծիքներ), այնուհետ բարձր են գնահատվել ***ամփոփիչ ատեստավորման գնահատման օբյեկտիվությունը*** և ***գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը***: Այդ բոլոր օրինաչափությունները նույն կերպ դրսևորվել են 2019թ. արդյունքներում: Հետաքրքրական է, որ համաձայն 2019թ. տվյալների կտրուկ բարձրացել էր ***պրակտիկաների օգտակարության*** գնահատականը, որը 2020թ. տվյալներով կրկին իջել է, զիջելով ***հաճախած դասընթացների օգտակարությանը*** և ***մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը***:
- ***Ֆարմացիայի ինստիտուտի*** շրջանավարտները առանձնանում են **գործնական հմտությունների մատուցումից** և **հաճախած դասընթացների օգտակարությունից** *բարձր գոհունակությամբ:* Ինչ վերաբերում է **օտար լեզուների իմացությանը**, ապա այստեղ առանձնանում են ***Միջազգային հարաբերությունների*** և ***Եվրոպական Լեզուների և Հաղորդակցության*** ֆակուլտետների շրջանավարտները բավականին *բարձր* գոհունակությամբ, իսկ ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտները առանձնանում են **օտար լեզուների իմացության** առավել *ցածր* գոհունակությամբ: **Պրակտիկաների օգտակարությունից** համեմատաբար *բարձր* գոհունակությամբ առանձնանում են ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները, նրանք նաև համեմատաբար *բարձր* գոհունակություն էին ցուցաբերել **ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից**: **Գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից** համեմատաբար *բարձր* գոհունակություն են դրսևորել ***Արևելագիտության*** ֆակուլտետի շրջանավարտները, իսկ համեմատաբար *ցածր* գոհունակություն ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները, նրանք նաև

ցածր էին գնահատել **ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունը**: ***Ռուս բանասիրության, Քիմիայի, Ռադիոֆիզիկայի, Ֆիզիկայի*** ֆակուլտետների , ինչպես նաև ***Ֆարմացիայի ինստիտուտի*** շրջանավարտներն առանձնանում են **գիտական ղեկավարների աշխատանքից** համեմատաբար *բարձր* գոհունակությամբ, իսկ ***Մաթեմատիկայի և մեխանիկայի***, ինչպես նաև ***Տնտեսագիտության և կառավարման*** ֆակուլտետների շրջանավարտները այդ հարցում դրսևորել են համեմատաբար *ցածր* գոհունակություն: ***Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը*** ևս առանձնանում է **գիտական ղեկավարների աշխատանքից** համեմատաբար *ցածր* գոհունակությամբ:

- Շրջանավարտների միջին բավարարվածությունը **ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից** ընդհանուր առմամբ ավելի *ցածր* է, քան ուսումնառությանը վերաբերող միջին բավարարվածությունը: 2020թ.-ի դրությամբ այս ոլորտում շրջանավարտների գոհունակությունը որոշակի փոփոխություններ է կրել: Եթե 2019թ.-ին շրջանավարտները առավել բավարարված էին ***լսարանային պայմաններով***, ապա 2020թ.-ին առավել գոհունակության է արժանացել ***գրադարանների կահավորումը***: 2020թ.-ին ***գրադարանից բավարարվածությունը*** համեմատած այլ բնութագրերի ավելի բարձր է, քան 2019թ.-ին բավականին բարձր տեղ զբաղեցրած ***համակարգչային սրահների մատչելիությունը:*** Իսկ բավարարվածությունը ***կարիերայի կենտրոնից*** և բավարարվածությունը ***համացանցի մատչելիությունից*** արդեն իսկ կանոնավոր *վերջին տեղերն* են զբաղեցնում:

  Այս դեպքում էլ կարող ենք փաստել, որ գնահատականներն 2020թ.հետազոտության համար *բավականին նվազել* են՝ համեմատած 2019թ.-ի: Միակ բացառություն է այս ոլորտում ***գրադարանների կահավորումից*** բավարարվածությունն է, որը բավականին *աճել* է՝ համեմատած 2019թ.-ի:

- **Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների** վերաբերյալ առավել *շատ* են *չտեղեկացված շրջանավարտները*: Ընդ որում, 2020թ. **Կարիերայի կենտրոնի** գործունեությանը ծանոթ չեն ավելի քան 20% շրջանավարտներ: Բնագիտական մասնագիտությունների շրջանավարտների 14%-ից ավելին տեղյակ չեն **լաբորատորիաներից**, իսկ 10%- տեղյակ չէ գրադարանների գրականության

ժամանակակից լինելուց: **Համացանցի մատչելիության** վերաբերյալ կարծիք չունեն 9%-ից ավելին շրջանավարտներ: Բավարարվածությունը ***կարիերայի կենտրոնից*** և բավարարվածությունը ***համացանցի մատչելիությունից*** արդեն իսկ կանոնավոր վերջին տեղերն են զբաղեցնում:

- **Լսարանային պայմաններից** համեմատաբար *բարձր* գոհունակությամբ առանձնանում են ***ՏՏ կենտրոնի*** շրջանավարտները, ***Արևելագիտության, Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետների շրջանավարտները, իսկ ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտները առանձնանում են **լսարանային պայմաններից** համեմատաբար *ցածր* գոհունակությամբ: **Համակարգչային սրահներից** *բարձր* գոհունակություն են ցուցաբերել ***Ֆարմացիայի ինստիտուտի, Ռադիոֆիզիկայի*** և ***Արևելագիտության*** ֆակուլտետների շրջանավարտները, իսկ ***Մանկավարժության և Կրթության Զարգացման կենտրոնի*** շրջանավարտները գրեթե ԲՈԼՈՐ բաղադրիչներից բարձր գոհունակություն ցուցաբերելով **Համակարգչային սրահներից** դրսևորել են համեմատաբար ***ցածր*** գոհունակություն: ***Ֆարմացիայի ինստիտուտի*** շրջանավարտները դրսևորել են համեմատաբար *բարձր* գոհունակություն նաև **համացանցի մատչելիությունից**: **Համացանցի մատչելիությունից** համեմատաբար *ցածր* գոհունակություն դրսևորել են ***Ֆիզիկայի, Ժուռնալիստիկայի*** և ***Մեխանիկայի և մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները: ***Ֆարմացիայի ինստիտուտի*** և ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները համեմատաբար *բարձր* գոհունակություն են դրսևորել **գրադարանի գրականության ժամանակակից լինելուց, գրադարանի սպասարկումից**, մինչդեռ ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտները համեմատաբար *ցածր* գոհունակություն են դրսևորում: **Գրադարանի կահավորումից** համեմատաբար *գոհ* են ***Արևելագիտության*** ֆակուլտետի շրջանավարտները, իսկ ***Քիմիայի*** և ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները դրսևորել են համեմատաբար *ցածր* գոհունակություն: **Գրադարանի սպասարկումից** համեմատաբար *ցածր* գոհունակություն են դրսևորում ***Հայ բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտները:

- ԵՊՀ միջավայրից շրջանավարտների բավարարվածության աստիճանը, համեմատած մնացած գնահատականների հետ, միջինում *ամենաբարձրն* է: Այդ միտումները պահպանվում են տարեց տարի:
- Սակայն այս հետազոտության շրջանակներում շեղվել է տարեց տարի դրսևորվող այն օրինաչափությունը, որ ամենաբարձր գնահատականների արժանանում էր ***ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը:*** 2019թ.-ին առավել բարձր էր գնահատվել ***ֆակուլտետի ղեկավարությանը:*** Սակայն 2020թ.-ին գոհունակությանը ***պրոֆեսորադասախոսական կազմից*** հավասարվել է ***ֆակուլտետների ղեկավարության*** գործունեությանը, իսկ 3-րդ տեղում է գնահատվել ***ԵՊՀ ղեկավարության*** գործունեությունը: Ըստ գոհունակության գնահատման, համեմատաբար *ցածր* տեղ զբաղեցնող շրջանավարտների ***ուսանողական կառույցների*** գործունեությունը շրջանավարտների կողմից ոչ միանշանակ է գնահատվել: Պետք է նշել, որ այս բոլոր այդ գնահատականները նվազել են 2020թ.-ին: ***ԵՊՀ ղեկավարությունից*** գոհունակությունը 2020թ. *աճել* է:
- ***Ուսանողների կառույցների*** գործունեությունից տեղյակ չեն 16%-ից ավելին շրջանավարտներ, իսկ ***ուսանողներին արձագանքելու*** ընթացակարգերին անտեղյակ շրջանավարտների թիվը ավելին է, քան 11%-ը:
- ***Ֆարմացիայի ինստիտուտի, Քիմիայի, Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետների շրջանավարտները համեմատաբար *բարձր* գոհունակություն են ցուցաբերել **ԵՊՀ ղեկավարությունից**, իսկ ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** և ***Ֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները՝ համեմատաբար *ցածր*: **Ֆակուլտետի ղեկավարությունից** համեմատաբար *բարձր* գոհունակություն են դրսևորել ***ԵՈՒ*** և ***ՏՏ կենտրոնների***, ***Ռադիոֆիզիկայի, Արևելագիտության*** ֆակուլտետների շրջանավարտները, իսկ համեմատաբար ցածր՝ ***Միջազգային հարաբերությունների*** և ***Ֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները: **Պրոֆեսորադասախոսական կազմից** առավել *գոհունակություն* են դրսևորել ***Աստվածաբանական, Ռուս բանասիրական, Ռադիոֆիզիկայի, Արևելագիտության*** ֆակուլտետների շրջանավարտները, իսկ հակառակ բևեռում են ***Ֆիզիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները:

Ուսանողական կառույցներից առավել *գոհ* են ***ԵՈՒ կենտրոնի*** մի քանի շրջանավարտ:

- **Կաշառքի և վճարովի պարապմունքների դեպքերը** չեն գերազանցում համապատասխանաբար 0.5% և 3.4%: Ընդհանուր նշված կոռուպցիայի դրսևորումները չեն գերազանցում 3.9%-ը:
- ***Մագիստրատուրայում*** **կոռուպցիայի** դեպքերը ավելի *քիչ* են, քան ***բակալավրիատում***:
- **Կոռուպցիայի դեպքերը** առավել *շատ* գրանցվել են ***Ռուս բանասիրության*** ֆակուլտետում, և *բացակայում* են ***Մանկավարժության և Կրթության Զարգացման կենտրոնում***՝ համեմատած պատասխանած շրջանավարտների թվի հետ:

Մեթոդաբանական առաջարկներ

- Այս տվյալներից ելնելով արժե ուշադրություն դարձնել ***հարցման իրականացման պայմաններին*** և ***ընթացակարգերին***, ստեղծելով այնպիսի պայմաններ, որպեսզի շրջանավարտները շահագրգռված լինեն մասնակցել հարցմանը, հակառակ դեպքում մենք ստանալու ենք կամավորների ընտրանք, ովքեր ինչ-ինչ սուբյեկտիվ պատճառներով կցանկանան մասնակցել հարցմանը:

  Այլ կերպ ասած, շրջանավարտների առցանց հարցումների տեխնոլոգիան անհրաժեշտ է *վերանայել*, շեշտը դնելով ***մոտիվացիայի բարձրացման վրա***: Մասնավորապես, որպես խրախուսման միջոց կարելի է ներառել որոշակի արտոնություններ պատասխանած ուսանողների համար, որպեսզի ԲՈԼՈՐ շրջանավարտները շահագրգռված լինեն մասնակցել հարցմանը: Ընդ որում նման խրախուսման ձևերը պետք է կրեն ունիվերսալ բնույթ, այսինքն՝ հետաքրքիր լինեն բոլոր շրջանավարտների համար:
- Կոռուպցիայի դրսևորման ձևերում *միջնորդի միջոցով գնահատականի ստացման* մեխանիզմը /որը կանոնավոր համեմատական բարձր դիրքեր էր զբաղեցնում/ դուրս է մնացել հետազոտության շրջանակներից: Ըստ այդմ, եթե անհրաժեշտություն կա առավել ստույգ տվյալներ ստանալ, այդ դրսևորումը ևս արժե է հաշվի առնել: